# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք,
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 6-րդ փող.1,
Հեռ. 098-910-932 , qaxsi.kotayk@mail.ru

N 031-19
*21 հունվարի 2021թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մեսրոպյան,

Համաձայն << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի, Ձեզ է ուղարկվում Քաղսի համայնքի ավագանու 2021թ հունվարի 18-ի թիվ 1-ին հերթական նիստի որոշումները:

Առդիր 11 փաթեթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռաֆայել Գրիգորյան

[illegible]

[illegible]

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 01

### 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 1-ԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին *որոշում է*

Հաստատել Քաղսի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 18-ի թիվ 1-ին հերթական նիստի օրակարգը

1. Քաղսի համայնքի 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Քաղսի համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:
3. Քաղսի համայնքի ղեկավարի 2020 թվականի չորրորդ եռամսյակի բյուջեի ընթացքի հաղորդման մասին:

Կողմ - 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵԴԻԿ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098 910 932, qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 02-Ն

### ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով,<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 8-րդ, 10-րդ և 12-րդ հոդվածներով,

Համայնքի ավագանին *որոշում է.*

1.Քաղսի համայնքի 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափը սահմանել համաձայն հավելվածների N1 և N2-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 10-րդ օրվան հաջորդող օրը:

Կողմ - 5 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՍԵԴԻԿ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Քաղսի համայնքի ավագանու
2021 թվականի հունիսի 18-ի N [illegible] որոշման

| հ/հ | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Համայնքի կողմից սահմանված դրույքաչափը /հազ.դրամ/ |
|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության և ոչ հիմնական շինությունների (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է | |
| | հիմնական շենքերի և շինությունների համար<br>1)մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար | 15,0 |
| | 2) սույն կետի 1)ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար<br>ա. 200-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 30,0 |
| | բ. 500-ից մինչև 1000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 50,0 |
| | գ. 1000-ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 50,0 |
| | դ. 3000-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 100,0 |
| | 3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար<br>ա. մինչև 20քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 3,0 |
| | բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 5,0 |
| 2. | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով | |
| | 1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն | 1,5 |
| | 2)բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1)ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով. | |
| | 3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը | |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է | 5,0 |

| | | |
|---|---|---|
| 4. | Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ օրացուցային տարվա համար սահմանվում է | 200,0 |
| 5. | Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոտեխսպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար | 60,0 |
| 6. | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ | |
| | 1) Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 5,0 |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 11,0 |
| | գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 14,0 |
| | դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 21,0 |
| | ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 45,0 |
| | զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 100,0 |
| | 2) Օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 5,0 |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 11,0 |
| | գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 14,0 |
| | դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 21,0 |
| | ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 45,0 |
| | զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 100,0 |
| 7. | Համայնքի վարչական տարածքում 1բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար, մեկ քառակուսի մետրի համար | 0,350 |
| 8. | Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է | |
| | 1)առևտրի օբյեկտների համար | 25,0 |
| | 2)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 50,0 |

| | | |
|---|---|---|
| | 3)բաղնիքների (սաունաների) համար | 200,0 |
| | 4)խաղատների համար | 500,0 |
| | 5)շահումով խաղերի համար | 250,0 |
| | 6)վիճակախաղերի համար | 100,0 |
| 9. | Համայնքի վարչական տարածքում համակարգչային ակումբի համար օրացուցային տարվա համար | 300,0 |
| 10. | Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝<br>1)հիմնական շինությունների ներսում՝ | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 5,0 |
| | բ. 26 ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 10,0 |
| | գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 15,0 |
| | դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 20,0 |
| | ե. 200 ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 30,0 |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 50,0 |
| | 2)ոչ հիմնական շինությունների ներսում՝<br>ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 0,5 |
| | բ. 26 ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 2,0 |
| | գ. 50 ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000 դրամ, | 2,5 |
| | դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 5,0 |
| | ե. 200 ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 9,0 |
| | զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 16,0 |
| 11. | Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար | |
| | 1)ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 2,0 |
| | 2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 3,5 |
| | 3)սոցիալական գովազդի համար՝ | 0 |
| | 4) այլ արտաքին գովազդի համար | 1,5 |
| | 5)դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով | 0,375 |
| | 6)եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով. | 0,15 |
| 12. | Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է | 100,0 |

| | | |
|---|---|---|
| 13. | Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է | 500,0 |
| 14. | Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | |
| | 1) 3հա -ից մինչև 5հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 2500,0 |
| | 2) 5հա -ից մինչև 7հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 5000,0 |
| | 3) 7հա -ից մինչև 10հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 7000,0 |
| | 4) 10հա -ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար | 10000,0 |

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Քաղսի համայնքի ավագանու
2021թ հունվարի 18-ի N02-Ն որոշման

# ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը /դրամ/ |
|---|---|---|
| 1. | Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 15000 |
| 2. | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների | 15000 |
| 3. | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 5000 |
| 4. | Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 5000 |
| 5. | Համայնքի կողմից մրցույթների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 5000 |
| 6. | Համայնքի կողմից աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 5000 |
| 7. | Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար | 150 |
| 8. | Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքի կողմից տրամադրվող թույլտվության վճար | 1000 |
| 9. | Համայնքի բնակելի տներին, շինություններին և սեփական հողամասերին հասցե տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 5000 |

| Հ/Հ | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը /դրամ/ |
|---|---|---|
| 10. | Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 15000 |
| 11 | Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսիի մանկապարտեզի ծնողական միջոցների ամսեկան վարձը սահմանել 5000 (հինգ հազար) դրամ, իսկ միևնույն ընտանիքից երկու և ավելի երեխաներ մանկապարտեզ հաճախելու դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար ծնողական միջոցների ամսեկան վարձը սահմանել 4000(չորս հազար) դրամ: | |
| 12 | Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 5000 |
| 13. | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար | 5000 |
| 14. | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար | 5000 |
| 15. | Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար | 1000 |
| 16. | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 1000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 03 -Ն

## ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, համայնքի ավագանին *որոշում է.*

1.Հաստատել Քաղսի համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեն, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵԴԻԿ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 04

## ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով,

Համայնքի ավագանին *որոշում է*՝

1. Ի գիտություն ընդունել Քաղսի համայնքի ղեկավարի 2020 թվականի չորրորդ եռամսյակի բյուջեի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ - 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ՂԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵՂԻԿ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ